

նորդ (Vicar) եւ վարիչ (Administrator) անուանեց¹²⁶ :

Թրանսիլվանիոյ Հայք թէեւ լատին եկեղեցւոյ հետ միացան, սակայն այն ատեն ունէին տակաւին արեւելեան սովորութիւններ, այսպէս պատարագի մէջ իրենց արեւելեան պատրիարքը կը յիշէին, եւ ոչ՝ զՔահանայապետն Հռոմայ, Ծննդեան եւ Յայտնութեան տօնը միեւնոյն օրը կը տօնէին, նաեւ տղոց Հաղորդութիւն կու տային¹²⁷, եւ վերջապէս կուսանաց միայն տարին երեք անգամ եկեղեցի երթալ թոյլ կու տային¹²⁸ :

Մինաս եպիսկոպոսին Սուչավայէն մեկնելէն ետեւ, Լատինք աշխատեցան, որ Մոլտաւիոյ հայ եպիսկոպոս մը դնեն, թէեւ միայն անուամբ, եւ այսպէս 1669 ին կը գտնենք Յովհաննէս Քրէմովիչ անուն Մոլտաւիոյ եպիսկոպոս մը եւ Լեմպերկի Արքեպիսկոպոսին տեղակալ¹²⁹ : Թէ այս եպիսկոպոսն իրօք միայն անուամբ էր, կը տեսնուի Տ. Լուդովիկոս-Մարիամ Բինտու (Յիսուսեան) կրօնաւորին 1669 Ապր. 1 ին գրածէն¹³⁰, որ Հայերն դարձրնելու համար Մոլտաւիա զրկուած էր. ասիկայ կը յիշէ՝ որ այն ժամանակի Յակոբ Կաթողիկոսէն ձեռնադրեալ 50 ամեայ Սահակ եպիսկոպոսն Մոլտաւիոյ՝ 20 քահանայ ունէր իշխանութեանը տակ :

Բինտու նաեւ կարեւոր տեղեկութիւններ կու տայ Մոլտաւիոյ հայ եկեղեցւոյն այն ժամանակի վիճակին վրայ. վասն զի կ'աւանդէ՝ թէ Եաշ իշխանական մայրաքաղաքին Հայերն երկու եկեղեցի, Կալացի, Սէրէթի¹³¹, Հոթինի եւ